

րական համաձայն գործակցութիւն՝ երկրիս
որ անկիւնն ալ որ գտնուինք:

Եթէ այս նոր արեւծագլին սկսինք գործադրութեան դնել մեր իսկ միջոցներով այս անգութական «քաղաքականութիւնը» կազմող Անաղովկ Ազգասիրութիւնը՝ կը յուսանք մեծապէս որ երեւան գայ քան նախընթաց տարիները «Օտարին անփուշ մեզի անոյշ» լաւագոյն արտադրութիւն մը ի նպաստ սազեցնուս, զոր ոչ մէկ սազ կարող է երջանկացնել՝ քան դարձեալ ինքն իսկ Հայը:

ԽՄԲ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՍԵԲԻՈՍԻ ԵՄԵՍԱՑԻՈՑ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱԾՈՑ

(յանուն կիրողի Աղեքսանդրացւոյ)

(Շար. տես Բազմավէպ 1923 էջ 359)



ԱՅ Կ Ա Կ Ա Ն վկայութեանց և փաստերուն կը մասնակցին նաեւ Եւրոպականները, ուր բաց ի մեր Ղևտականէն՝ կան նաեւ բաւական կտորներ Եւնդոցէն, սաղմոսներէն, Աւտարաններէն, և Առաքելոց թուղթերէն, յանուն Եւսերի զանազան ձեռագրերներուն մէջ, ոմանք իրենց յոյն բնագիր շղթայից մէջ և ոմանք թարգմանութիւններուն մէջ:

Տեսանք թէ ո՛րքան հայկական հին մատենագրութիւնը բայայայտ կերպով կը խօսի իւր վկայութիւններով և փաստերով, մանաւանդ այդ անձանթ բարեյիշատակ Դաւիթ հիւպատի վկայութիւնը՝ այս մեկ նութեանս մասին, այնքան արդի քննադատը ոչ ինչ գրած են, և թերթերուն մէջ ոչ մէկ յիշատակութիւն կը գտնուի ասոր մասին:

Եւրոպական մատենագրութիւնն ալ շատ քիչ զբաղած է Եւսերիոսի գրութեանց նկատմամբ, թերեւս կորսուած ըլլալուն պատճառաւ, սակայն բազմաթիւ հրատարակութեանց մէջ ցիրուցան յօդուածներ կան՝ երբեմն անոր անձին վրայ, երբեմն գրուածոց վրայ: Յունական հին մատենագրութիւնն ալ բաւական զովեստով և խանդավառութեամբ կը խօսի Եւսերիոսի հանձարին և հեղինակութեանց վրայ:

Եթեւնաստաներորդ դարէն սկսեալ Եւրոպացիք սկսած են Եւսերի մասին գրել, հրատարակելով՝ ճիշտ և անճիշտ ճառեր և մեկնութիւններ անոր անուամբ: Մասնաւորապէս յունական զանազան Շղթաներ կը յիշատակեն ստէպ Եւսերեայ աւուներ, և դեռ շատ ճառեր կը վերագրուին անոր: Այսպէս Ուտինոս Commentar. de Scriptor. antiq. eccles. Հատ. Ա. էջ 391-92, ուր կ'աւանդէ թէ Եմեսացւոյն գրութիւնքն ամբողջովին հասած են մեզ: (Անշուշտ զանազան Եւսերեանց գրեանքն իրար խառնելով):

Այլք ի միայն ի Շղթայս յոյն Ս. Հարց կ'աւանդեն, թէ ինչ ինչ կտորներ պահուած ըլլան Եւսերեայ մեկնութիւններէն, և այլ ոչ ինչ, ինչպէս Փ. Լապպէյի իւր հաղագրիւտ գրքին մէջ (De Script. eccles. Հատ. Ա. էջ 779 Բարիւ 1660), ուր ի միջի այլոց այսպէս կը գրէ. «Անոր (Եւսերեայ Եմես.) Ս. Գրոց մեկնութիւններէն ինչ ինչ կտորներ՝ թէ՛ Թէոդորիսոսին քով կը գտնուին և թէ Յոյն հարց Շղթայից մէջ»:

Լապպէյիին կը ձայնակցին է Տուրինոյ իւր՝ Nov. Bibliotheca. Scrip. eccles. գրքին մէջ, (Հատ. Բ. էջ 126 Քոլոնիա 1692): Փր. Քոմպլէի (Bibliotheca Concion. Հատ. Ա. էջ 12). և այսպէս շատեր: Սակայն այս հեղինակներէն ոչ մէկը, կ'ըսէ Հայր. Կուլ. Առկուստի՝ (որ առանձին գրքով մը Եմեսացւոյն վրայ խօսած է¹) իրենց ըսած կտորներէն օրինակ մը

1. Eusebii Emeseni quæ super sunt opuscula Græca. Elberfeldi 1829.

յառաջ բերած են, կամ թէ ինչ Շղթա-
ներու մէջ կը գտնուին՝ նշանակած են:

Յունական Շղթաներն ալ յաճախ զանց
ընելով Եւսեբիոս անուան ըով «Եմեսացւոյ»
բացայայտիչը, երկար աշխատութեանց և
տարածայնութեանց առիթ եղած են, Եւ-
սեբիոսներու նախիր մը ստեղծելով. բա-
րեբախտաբար հայկական ձեռագիրները
այս մասով բոլորովին որոշ կը խօսին:

Հին հեղինակներէն մի միայն Ս. Հե-
րոնիմոսն է որ Եմեսացւոյն գրուածոց վը-
րայ կը խօսի, ոչ Սոկրատ (Պատ. Բ. 9),
ոչ Սոզոմենոս (Պատ. Գ. 6) և ոչ ալ
հեղինակներ, որ անոր կեանքին պատմա-
կան դրուագները մանրամասնօրէն կ'ա-
ւանդէին՝ անցողակի կերպով իսկ խօսք
մը կ'ընեն:

Ս. Հերոնիմոսի գրածն ալ ինքին չնչին
բան մ'է վկայութեան և կամ տեղեկու-
թեան տեսակետով. ահա անոր խօսքերը.
«Եւսեբիոս Եմեսացոց եպիսկոպոսն, վայել-
չարան և հսկայեղ ձարտաւուն, ժողովրդ-
դեան անբիւ օգտակար ցրքեր ցրեց. և աւելի
պատմական ոճին հետեւելով շատ ախորժով
կը կարդացոյի անեղմէ՛ որ ձարտաւուն կ'ու-
ղեն ըլլայ, այդ գրուածոց գլխաւորներն են
Բնդդեմ Հրէից և Հեթանոսաց, Բնդդեմ Նո-
վատեանց, և առ Գարստացիս տարբ ցրքը.
և յԱնտարանն շամառօտ ձտեր և այլ
բազմաբիւ (գրուածք) — կոստանդ կայսեր
ժամանակներն ժողկեցաւ, որուն ժամանակն
այ միտաւ և Անտիոքի մէջ քաղուեցաւ» (Բա-
ղապ Երեւելի արանց — Գլ. ԱԱ.):

Յաւալի է մեզ որ Եւսեբիոսի ժամա-
նակակից և ընկերակից Գէորգ Լաւորի-
կեցւոյն գրած Եւսեբեայ կենսագրութիւնը
չէ հասած, հետեւաբար իրեւ պատմական
կերպով վկայող անձ մը անոր գրութեանց
մասին գրեթէ չկայ:

Բաց ի Հերոնիմոսի յիշատակած գրե-
րէն՝ եկեղեցական մատենագրութիւնը յա-
նուն Եւսեբեայ մեզ կու տայ նաև Հնգա-
մատենի մեկնութեան մը հատակոտորներ
ի Շղթայս Յոյն Ս. Հարց. այսպէս նաև
երկու ճառեր ընդդէմ Սարգիսանց:

Նթէ Հ. Կ. Առկուստի և իրեն հետ

քանի մը հին հեղինակներ առանց որ և է
առարկութեան այդ ամէն զրգբը կ'ընդու-
նին իբր Եւսեբեայ՝ բայց վերջին գիտնա-
կանները բոլորովին տարբեր կերպով ար-
տայայտուեցան այդ գրուածոց մասին:

Այսպէս I. C. Thilo — (Über die
Schriften des Eusebius von Alexan-
drien und des Eusebius von Emisa.
Halle 1832). Jos. Fessler. (Institu-
tiones Patrologicae Հատ. Բ. էջ 2).
Tillemont — Les Ariens. Եղ 31 (էջ
313-15), որոնք ճշնական կերպով ապա-
ցուցին թէ այդ վերի յիշեալ և այլ գրու-
թիւններէն ոմանք Եւսեբիոս Աղեքսան-
դրացւոյն (2 դար) կը պատկանին և ոմանք
Սուրբ Պրունոյ Աստիացի Գաղղիացւոյն
(1125):

Սակայն այս ճշնադատներէն ամէնքն
ալ ոչ մէկ առարկութիւն կը յարուցանեն
Եւսեբեայ մեկնութեանց մասին, թէպէտ
չկայ գրեթէ ոչ մէկ հին հեղինակ որ
յայտնապէս մեզ աւանդած ըլլայ, թէ Եւ-
սեբիոս Հին Կտակարանի մեկնութիւն գրած
է: Լուծիւնը սակայն ոչ մէկուն փաստ է:

Չանգաւն Յոյն Շղթայից ձեռագիրներ
և հին լատինական թարգմանութիւններ՝ նա
մանաւանդ որ ինչ ինչ գիտնական հրատա-
րակութիւններ իբր տարակուսական դուրս
թողով Եւսեբեայ հատակոտորներն յԱն-
տարաններէն, ընդհակառակն՝ յաճախ կը
յիշատակեն անոր հին կտակարանէն կը-
տորները այսպէս Noesselti — De Ca-
tenis patrum Græcorum in Novum
testamentum observationes — Halæ
1817. ուր և ոչ իսկ անգամ մը Եւսեբեայ
անունը կայ:

Մինչդեռ ի Շղթայս հին կտակարանի
Ս. Հարց Եւսեբեայ անունը յաճախ կը
գրանուի:

Ահաւասիկ այն Յոյն Շղթաներու հրա-
տարակութիւններն, որոնցմէ քաղած ենք
Եւսեբեայ մասերը:

Catena in Genesim ex auctoribus
ecclesiasticis plus minus Sexaginta
auctore Aloisio Lippomano. Paris
1546 էջ, 30, 59 118 424 —, որուն

հրատարակութեան մէջ հետեւեալ կտորները կը գտնենք.

Ա. էջ. 30. Ծննդ. Ա. 6.

Eusebius Emesenus

Կ Ի Ի Ր Ե Ղ

Quæritur, utrum luminaria ac stellæ infra cælum distantia eorum peragant, an cuncta fixa sint, an veluti viatores in cælo iter faciant?.

Ac si quidem (quidam) dixerint, infra cælum currere, audiant Homerum, apud quem sol e fluentis Oceani ad medium cælum ascendit, deinde cursu confecto, occidit. Neque item cælo fixa dici possunt; ea enim ratione alterum altero nunquam velocius esset, quod tamen adeo perspicuum est ut negari non possit.

Sacra ergo ac divina Scriptura testatur, cælum firmum atque immobile esse, solem vero ac lunam in cælo moveri, ac cursum suum peragere.

Nam in Josue dictum est *Sol et luna stet*: non ait: cælum movens lunam aut solem, stet.

Item ab Ezechia dictum est: *Sol retrocedat*: non ait cælum movens solem retrocedat.

Խնդիր է, ի ներքին երկնից (Լուսնուորքն) զո՞րք աստղերն ունեցին հեռագոյն վայրաց ինչ յերկնից, թէ կեց իցեն. այսինքն է հաստատեալը, եթէ որպէս յերկրի ճանապարհորդաց, նշնապէս է յերկինս իցեն Լուսնուորքն:

Կամ եղև ոմանք ասել, եթէ հաստատեալ են յերկինս. և ոչ տրեգակն ընթանայ և ոչ լուսին Լուսնից Հովհաննիսի որ ասէ, եթէ յովհաննիսի յործածանց ելանէ և յերկնից ի մէջ վերանայ, և ապա անտի յարձակուան երթեալ մըտանէ զի եթէ նոցա անշարժ կային, և յերկնիցն ընդմեջն չարժէին, ապա ոչ մի ցան զմիտն երեւազոյն էր

Բայց Գրոց միաց այսն, թէ յերկնից հաստատեալ է անշարժ են, և արեգակն և լուսին շարժունք և զնայունք. . . . Քանիդ. . . . ասէ Տեառ կուցէ արեգակն և ոչ եթէ երկիրն որ զնայն շարժիցեն, նշնապէս և զլուսնայն. . . .

Բայց երևի և առ Կեղև կիսա թաղարարս. զարեգական ընթացք դարձուցեալ յետս, և ոչ զերկնից:

liis arboribus plantatum fuisse. Syrus autem interpres transtulit: et plantavit Deus paradysum in Eden, non ut alii ἀπ' ἀρχῆς, id est a principio.

Complures vero tradunt, paradysum post alia a Deo conditum atque plantatum fuisse.

Cum enim Moyses dixisset: Et plantavit Deus paradysum et posuit in eo hominem, quem formavit, continuo subiunxit, et produxit Deus adhuc de terra omne lignum pulchrum visu,

etc. Adhuc enim sive prieterea, significat plantas paradisi consitas post ea, quæ simul a principio creationis facta fuerant.

Idem. — Aliter Eden locum esse aiunt, in quo paradysus consitus sit atque plantatus, eumque in medio mundi positum esse.

Գ. — էջ. 118. Ծնն. 2. 26.

Eusebius Emesenus

Կ Ի Ի Ր Ե Ղ

In Hebræo legitur: *Hic speravit invocari nomine Domini*, Hoc est Deus dici, et Filius Dei. Iusti enim, qui erant a semine Seth, filii Dei vocabantur.

Այս յուսացած կոչել զտեառն Տեառն Աստուծոյ. ի Հեբրայեցիին ոչ այսպիսի ասէ, այլ թէ աս յուսացած կոչել յանուն Տեառն Աստուծոյ. այսինքն է Որդի Աստուծոյ անուններ և Աստուծո. զի որք ի Սեթյան էին արդարք եղևին:

Բ. — էջ. 59. Ծննդ. Բ. 4.

Eusebius epis. Emesenus

Կ Ի Ի Ր Ե Ղ

Alii quidem tradunt, Eden appellari locum, in quo paradysus plantatus sit. Alii vero Eden nomine paradysum, ipsum intelligi volunt, interpretationem ipsam pro nomine posuisse. Queritur vero, utrum paradysus post factum hominem plantatus sit? Verba enim Moysis id significare videntur, tertia die una cum a-

Ձաղինն ոմանք ասեն և. թէ տեղի էր յորում դրախտն անկեցաւ, Արինն դարձեալ զդրախտն ասէ. և թարգմանեն զթարգմանութիւնն և. զեալ՝ և զոր ի թարգմանութիւնն կալուց է. ինչորք է յետ ասեղծանիւոյ զմարդն անկեցաւ. արդեւ դրախտն. քանզի բանքն այնպիսի իմն նշանակեն, եթէ յերբորդում ատուրն ընդ այլ ծառս:

Յաստիք զիսա այսպէս կայ. անկեաց տեր Աստուծոյ զդրախտն Արինն

Eusebius Emesenus

Կ Ի Ի Ր Ե Ղ

Dan iudicabit. etc. Hoc ergo ad Sampsonem refertur, qui ita facile duodecim tribubus, sicut uni præfuit. *Fiat ipsi Dan serpens*, etc; id est quoniam admodum calceaneo equi a serpente in via morso, necesse est ut adscensor, retro cadat nullamque spem nisi in Dei ope atque auxilio habeat ea-

Դանն դատեացէ և այլն. Յուցանէ աստ եթէ յառնելուց է յազգէ Դանայ Սամփսոն, և զզօրութիւն ասն կամի ցուցանել, վասն այնորիկ նմանեցուցանէ զնա օժի որ դարանակալ իցէ ի ճանապարհի, հարկանել զգալապար զերիմարի, և արկանել ի վայր գնեծեալս, զի ոչ այլ իւրի կարիցէ կանգնել, քայլց եթէ ձառամբ Տեառն, Զի և Սամփ.

dem ratione Sampson Dalila [iuxta textum Hebr Delilah] tanquam serpente morsus corruit, atque una cum eo populus Israël, qui a Sampson veluti equus ferebatur, donec iterum divina virtute corroboratus, ultionem de Philistenis iure ac meritoque sumpsit.

սոն սաստիկ Հարուածս ածի վերայ պատերազմողացն. որոյ և վախճան կենաց իւրոց եւս դառնալոյն եղև թշնամեացն քան զպատեւ թաղմունսն...

ՄՈՒՃԱՆԻ ԶԱՆՈՐՄԱՆԱԼ ԳԱԽԱՐԸ

(Աշխարհային - Պատմական ուսումնասիրություններ)

(Շար. տես Բազմ. 1923 էջ 858)

Ե.

Զգեստ և զարդ. — Տղամարդկանց զգեստը. — կանանց զգեստը. — Գլխի յարդարանք և զարդեր:

Ընդհանրապէս Զահարմահայացի տղամարդը հագնուում, զարդարուում է ճիշտ պարսկի նման և նրա նման էլ մագերը շինուում ու ածիլուում, այնպէս որ տիպիկ Զահարմահայացի հային կարելի է գանազանել միայն դիմագծից: Այդ հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ պարսկական վարք ու բարքը, սովորութիւնները խորամատ են ձգել նրա կեանքում: Ընդհակառակը, դրա փոխարէն, կանայք մինչև այսօր էլ սրբութեանը պահել — պահպանել են իրենց հայկական նախնին, տիպական զգեստը, որը ձևում և կարում են հենց իրենք՝ կանայք:

Առաստարակ ունեւոր կանայք երկու, երեք ձեռք չոր են կարում, իսկ միջակներն ու աղքատները՝ մի կամ երկու: Վերջիններս մինչև որ իրենց հագի չորը չի մշտում՝ նորը երբեք չեն կարում: Լւանում են երկու շաբաթը կամ ամիսը մի անգամ: Այժմ ծանօթանալով թէ՛ տղամարդկանց և թէ՛ կանանց զգեստների հետ:

Տղամարդկանց զգեստը

Շապիկ. — Տղամարդու շապիկը շատ երկար է, հասնում է մինչև ազդրերը. կարում են՝ հարուստներն ու միջակները միջակից կամ չլարից, իսկ աղքատները՝ կտակից. բացւում է ալ ուսի վրայից մինչև կուրծքը. և ունի երկու կոճակ, մէկն ուսի վրայ, իսկ միւսը՝ կրծքի. կամ բացւում է կոկորդի տակից մինչև պորտը և կոճակում է 4-6 կոճակներով. թեւերը լայն են (մի թզաչափ), և երկար, հասնում են մինչև թաթերը:

Ոլորշոր կամ փոխնորդ (տումբակ). — Սա երեք քառորդ զաղ չափութիւն ունի և իշնում է մինչև ոտաթաթը. վերին ծայրը դարձած է, որի միջով անց են կացնում երկու կողմերը փնջերով զարդարած, բամբակից կամ բրդից

Զունենալով առջեւ այս կտորներուն Յոյն Շղթայից բնագիրը և դիւրամատչելի չլլալով մեզ հեռաւորութեան պատճառով՝ կը շատանամ լատինական թարգմանութիւնը դնելով, միակ նպատակ ունենալով հոս ցուցնել հանրութեան՝ թէ յանուն Եւսեբեայ հասած են մեր Շղթաներէն զուրս դեռ ուրիշ հատակոտորներ ալ այն զրքէն՝ զոր միայնամբ ցարդ աւանդութիւնը և քանի մը ձեռագիրք Ս. Կիրիլի կ'ընծայէին: Ընթերցողը յայտնի տեսաւ թէ հայկական բնագիրը միշտ ընդարձակ և լրացուցիչ է, ինչպէս էր հայ Շղթաներու նկատմամբ:

Մի միայն այս Դ. Օրինակին հայկականը թէ՛ համառօտ կ'անցնի և թէ բաւական տարբերութիւն կայ. պատճառն է ըստ իս՝ որ մեր թարգմանութիւնը իւր վերջին մասերուն մէջ քիչ մը կ'անապարէ և կը սղէ:

Նոյնպէս նաեւ Բ. վկայութեան վարը նոյն մը դրուած է, որուն Հայերէնը չգտայ և արդէն յայտնի կը տեսնուի որ աւելորդ կրկնութիւն մ'է Բ. օրինակին:

Հ. Վ. ՅՈՒՆԱՆԻՍԻԱՆ

Շարունակի

Ձի՞ կամք, զի՞ կաղամբ. ամն սլացաւ, ի բաց թռեաւ: Փուկասցո՞ւք արագեացուք. երագուկեալն ընթացից բարեաց գործոց դարման տարցուք սրուկեան Ժաւանակի:

(Տար. Առաք)